ՊԱՅՄԱՆԱԳԻՐ № 2-7

ՀՀ ԳԱԱ ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Քաղաք Երևան «29» 01 2015 թ.

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի նախագահությունը, ի դեմս ՀՀ ԳԱԱ նախագահ ակադեմիկոս Ռաֆիկ Մարտիրոսի Մարտիրոսյանի (այսուհետ՝ ՀՀ ԳԱԱ), որը գործում է ՀՀ ԳԱԱ կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «ՀՀ ԳԱԱ Ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտ» ՊՈԱԿ -ը, ի դեմս տնօրեն Արտակ Հենրիկի Մկրտչյանի (այսուհետ՝ Կազմակերպություն), որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի № 1121 որոշումը (այսուհետ՝ որոշում), ՀՀ Պետական բյուջեի «Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքների պահպանում և զարգացում» ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով ՀՀ ԳԱԱ-ն պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեով նախատեսված՝ մինչև 247647100 (երկու հարյուր քառասունյոթ միլիոն վեց հարյուր քառասունյոթ հազար հարյուր) ՀՀ դրամ գումար, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ Կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումների (այսուհետ՝ միջոցառումներ) կատարման փուլերի ժամկետները որոշվում են առաջադրանքով և օրացուցային պլանով, որոնք սույն պայմանագրի անբաժանելի մասն են (հավելվածներ 1 և 2):

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. ՀՀ ԳԱԱ-ն իրավունք ունի՝

2.1.1. Կազմակերպությունից պահանջել կատարելու սույն պայմանագրի 2.4. կետով նախատեսված պարտավորությունները,

2.1.2. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ լիազոր մարմնի միջոցով) ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,

2.1.3. չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 6.1-ին կետով նախատեսված տուգանքը,

2.1.4. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե

ա. Կազմակերպությանը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված միջոցառման արդյունքը ՀՀ ԳԱԱ-ի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը,

2.2.2. ՀՀ ԳԱԱ-ի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.3. ծրագրի կատարման համար, օրենսդրությամբ սահմանված կարգով, ներգրավել երրորդ անձանց,

2.2.4 ՀՀ ԳԱԱ-ի գրավոր համաձայնությամբ այլ կազմակերպություններին հանձնել կատարված աշխատանքների արդյունքները:

2.3. ՀՀ ԳԱԱ-ն պարտավոր է՝

2.3.1. ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը,

2.3.2. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ,

2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ,

2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են: Ընդ որում, ՀՀ ԳԱԱ-ն հաշվետվությունն ընդունելու դեպքում եռօրյա ժամկետում դրա մասին գրավոր ծանուցում է Կազմակերպությանը,

2.3.5. ստուգել ու ամփոփել Կազմակերպության կողմից ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկությունների հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին հաշվարկները և իր եզրակացության հետ միասին դրանք ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ վերջինիս կողմից սահմանված կարգով և ժամկետներում:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. ծրագիրը կատարել անձամբ,

2.4.2. ծրագիրը կատարել ՀՀ ԳԱԱ-ի կողմից հաստատված գիտական ծրագրի առաջադրանքին համապատասխան և դրա արդյունքը ՀՀ ԳԱԱ հանձնել սահմանված ժամկետում,

2.4.3. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,

2.4.4. կատարել ՀՀ ԳԱԱ-ի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.5. աշխատանքի սպասվելիք արդյունքի ստացման անհնարինության հայտնաբերման կամ աշխատանքը շարունակելու աննպատակահարմարության մասին անհապաղ տեղեկացնել ՀՀ ԳԱԱ,

2.4.6. ՀՀ ԳԱԱ ներկայացնել հաշվետու ժամանակաշրջանում սույն պայմանագրի շրջանակներում վճարման գումարի չափի վերաբերյալ հայտ (այսուհետ՝ հայտ) մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսի 10-ը: Հայտում նշվում է սույն պայմանագրի շրջանակներում Կազմակերպության կողմից ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկություններ և դրանց հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին մանրամասն հաշվարկներ,

2.4.7. իրականացնել ծրագրի շրջանակներում ՀՀ ԳԱԱ-ի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման N 20 ստանդարտի դրույթներին համապատասխան հաշվառում,

2.4.8. սույն պայմանագրով սահմանված կարգով ՀՀ ԳԱԱ ներկայացնել միջոցառումների իրականացման մասին հաշվետվություններ առանց այլ կազմակերպությունների պատվերների կատարման ընթացքում ստացված գիտական արդյունքների, իսկ ծրագրի ավարտից հետո՝ տարեկան ամփոփ հաշվետվություն՝ դրան կցելով աշխատանքի հանձնման-ընդունման երկկողմ ակտ,

2.4.9. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու ՀՀ ԳԱԱ-ի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում,

2.4.10. ՀՀ ԳԱԱ-ի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվություն չընդունվելու դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է անվճար ՀՀ ԳԱԱ-ի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները,

2.4.11. ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները, ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

3. Ծրագրի ֆինանսավորման չափը

3.1. Ծրագրի ֆինանսավորման չափը կազմում է 247647100 (երկու հարյուր քառասունյոթ միլիոն վեց հարյուր քառասունյոթ հազար հարյուր) ՀՀ դրամ:

4. Մոնիթորինգը

4.1. ՀՀ ԳԱԱ-ն . ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և ամփոփիչ արդյունքները համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

4.2. Մոնիթորինգն իրականացվում է ՀՀ ԳԱԱ-ի կամ նրա կողմից լիազորված անձի կողմից:

4.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

4.4. ՀՀ ԳԱԱ-ն ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

4.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

5. Վճարման կարգը և ժամկետները

5.1. Կազմակերպությանը վճարումները կատարվում են հայտն ընդունվելու օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում, եթե ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և ժամկետներ:

5.2. ՀՀ ԳԱԱ-ն վճարում է կատարած աշխատանքի համար մինչև արդյունքը ստանալու անհնարինությունը պարզելը, եթե դա տեղի է ունեցել Կազմակերպությունից անկախ հանգամանքների հետևանքով:

5.3. ՀՀ ԳԱԱ-ն Կազմակերպությանը վճարում է կանխավճար՝ սույն պայմանագրով նախատեսված գումարի մինչև 92 տոկոսի չափով՝ մինչև 227835332 (երկու հարյուր քսանյոթ միլիոն ութ հարյուր երեսունհինգ հազար երեք հարյուր երեսուներկու) ՀՀ դրամ, որն ըստ եռամսյակների բաշխվում է հետևյալ կերպ. 1-ին եռամսյակում՝ 20 տոկոս, 2-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 3-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 4-րդ եռամսյակում՝ 30 տոկոս:

5.4. ՀՀ ԳԱԱ-ն Կազմակերպությանը սույն պայմանագրով նախատեսված գամարի 8 տոկոսը վճարում է տնտեսական և այլ ծախսերի մասով հատկացված գումարից, եթե միջոցառումների իրականացման մասին հաշվետվությանը ՀՀ ԳԱԱ-ի կողմից տրվել է դրական եզրակացություն:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1. Սույն պայմանագրով և ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է փոխհատուցել չիրականացված միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը Կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությանները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: ՀՀ ԳԱԱ-ն սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

7. Պայմանագրի գործողության ժամկետը

7.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Եզրափակիչ դրույթներ

9.1. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

9.2. Պայմանագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ: Պայմանագրի անբաժանելի մասն են՝

ա. Կազմակերպության կողմից ՀՀ ԳԱԱ ներկայացված գիտական ծրագրի հայտը,

բ. Առաջադրանքը (հավելված 1),

գ. Օրացուցային պլանը (հավելված 2),

դ. Պայմանագրի գնի մասին համաձայնության արձանագրությունը (հավելված 3),

ե. Գիտական ծրագրի նախահաշիվը (հավելված 4):

9.3. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պատվիրատու	Կատարող
ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա	ՀՀ ԳԱԱ Ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտ
Հասցե ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 24	**Հասցե** Հր. Ներսիսյան 25, 0014, ք. Երևան
Բանկային տվյալներ ԱՐԱՐԱՏ ԲԱՆԿ ԲԲԸ	**Բանկային տվյալներ** Զարգացման հայկական բանկ
Հ/Հ 1510005175820100	**Հ/Հ** 181005200723311
ՀՎՀՀ 00005673	**ՀՎՀՀ** 00008791
ՀՀ ԳԱԱ Նախագահ	ՀՀ ԳԱԱ ՖԿՊԻ-ի տնօրեն Ա.Հ. Մկրտչյան
ակադեմիկոս Ռ.Մ. Մարտիրոսյան	
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

ՌԱՖԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

«29» 01 2015թ. Հավելված 1
№2-7 պայմանագրի

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

«Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքների պահպանում և զարգացում» ծրագրի
(ծրագրի անվանումը)

1. Աշխատանքի կատարման հիմքը Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջե
2. Աշխատանքի նպատակը

Կատարել հիմնարար հետազոտություններ ակուստաֆիզիկայի, կոնդենսացված միջավայրերի ֆիզիկայի, ակուստիկայի, ցածր ջերմաստիճանային պլազմայի ֆիզիկայի և նյութագիտության բնագավառներում:

Հիմնարար հետազոտությունների ընթացքում ստացված արդյունքների հիման վրա կատարել գիտատեխնիկական մշակումներ և ստեղծել համապատասխան գիտատար սարքերի լաբորատոր նմուշներ:

Պահպանել և ընդլայնել ինստիտուտում ձևավորված գիտական դպրոցը և առկա գիտական ներուժը, համալրելով գիտական հետազոտությունների մեջ ընդգրկված երիտասարդ մասնագետներով:

3. Աշխատանքին ներկայացվող հիմնական պահանջները

Արդյունքների հավաստիություն, նորություն, խնդրի դրվածքի արդիականություն, հրատապություն, ժամանակակից փորձարարական տեխնիկայի կիրառություն, տվյալ ուղղությամբ հետազոտությունների ուրույն տեղը համաշխարհային գիտության մեջ:

4. Աշխատանքի բովանդակությունը

Ընթացիկ ծրագիրը հանդիսանում է ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորվող 2011-2015թթ. ժամանակահատվածում իրականացվող գիտական ծրագրի հերթական փուլ և նախատեսվում է իրականացնել համապատասխան գիտահետազոտական աշխատանքներ ըստ հաստատված ծրագրի: Նախատեսվում է շարունակել և ընդլայնել ուսումնասիրությունները հետևյալ ուղղություններով՝

- Մյոսբաուէրյան սպեկտրասկոպիա արտաքին դաշտերի առկայության պայմաններում
- Անգստրեմային երկարություն ունեցող ալիքների (ռենտգենյան, սինքրոտրոնային, գամմա) դիֆրակցիան բյուրեղներում՝ ակուստիկ գերցանցի առկայության պայմաններում
- Պյեզոբյուրեղներում ռելյատիվիստիկ էլեկտրոնների ու պոզիտրոնների կանալացման երևույթի ուսումնասիրությունը ակուստիկ հիպերհաճախային դաշտերի առկայության պայմաններում
- Բյուրեղներում հիպերհաճախային ակուստիկ դաշտերի ազդեցությունը ռելյատիվիստիկ էլեկտրոնների արգելակային կոհերենտ ճառագայթման վրա
- Լիցքավորված ռելյատիվիստիկ էլեկտրոնների պարամետրիկ ռենտգենյան ճառագայթումը բյուրեղներում ակուստիկ դաշտերի առկայության պայմաններում և առանց ակուստիկ դաշտերի
- Ռելյատիվիստիկ էլեկտրոնների անցումային ճառագայթումը էլեկտրամագնիսական դաշտով մակածված դիէլեկտրիկական թափանցելիության գերցանցի վրա
- Ռելյատիվիստիկ լիցքավորված մասնիկների ճառագայթումը գլանային ու սֆերիկ համաչափությամբ օժտված միջավայրերում
- Մակերևույթային ակուստիկ ալիքների միջոցով վակուումից առաքված քվանտային ճառագայթման հետազոտում
- Սառը պլազմայի բնութագրիչների կառավարումը արտաքին ակուստիկ դաշտերով
- Հեղուկ բյուրեղների բնութագրիչների կառավարումը արտաքին ազդակներով
- Նյութագիտություն
- Գիտատար սարքաշինություն

5. Գիտական աշխատանքի արդյունքների ներկայացման ձևը՝ տարեկան հաշվետվություն

ՀՀ ԳԱԱ ՖԳՊԻ տնօրեն _____ (Ա.Հ.Մկրտչյան)
(ստորագրություն) (Ա.Հ.Ա.)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ ՖԻԶԻԿԱՅԻ ԿԻՐԱՌԱԿԱՆ ԽՆԴՐՈՒՄՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ ՊՐՈԲԼԵՄ ՖԻԶԻԿԻ ՆԱՆ ՊԱ ԳԱՍՍՀ
«ՀԱՅԱՍՏԱՆ» * 00008791 *

Հավելված 2
«29» 01 2015թ.
№ 4-Ն պայմանագրի

ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ՊԼԱՆ

2015թ.-ի կտրվածքով «Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքների պահպանում և զարգացում» ծրագրի
(ծրագրի անվանումը)

NN ը/կ	Իրականացվելիք միջոցառումներ					
	անվանումը	համառոտ բովանդակություն	կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	Վերջնա-ժամկետը	պահանջվող գումարը (դրամ)
	«Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքների պահպանում և զարգացում» ծրագրի 2015թ.-ի փուլ	Հետազոտություններ ակուստաֆիզիկայի, կոնդենսացված միջավայրերի ֆիզիկայի, ակուստիկայի, ցածր ջերմաստիճանային պլազմայի ֆիզիկայի, նյութագիտության և գիտատար սարքաշինության բնագավառներում	փորձարարական և տեսական հիմնարար հետազոտություններ, կիրառական մշակումներ	Գիտական հրապարակումներ, զեկույցներ և արտոնագրեր, տարեկան հաշվետվություն	31.12.2015	247647100
Ընդամենը 247647100 (երկու հարյուր քառասունյոթ միլիոն վեց հարյուր քառասունյոթ հազար հարյուր) ՀՀ դրամ:						

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա

ՀՀ ԳԱԱ Նախագահ

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ռ.Մ. Մարտիրոսյան

(ստորագրություն)

ՀՀ ԳԱԱ Ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտ

ՀՀ ԳԱԱ ՖԿՊԻ-ի տնօրեն Ա.Հ. Մկրտչյան

(ստորագրություն)

Հավելված 3
«29» 01 2015թ.
№ 2-7 պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Պայմանագրի գնի մասին համաձայնություն

«Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքների պահպանում և զարգացում» ծրագրի

Մենք՝ ներքոստորագրյալներս, ի դեմս ՀՀ ԳԱԱ նախագահ ակադեմիկոս Ռ.Մ.Մարտիրոսյանը և <<ՀՀ ԳԱԱ Ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտ>> ՊՈԱԿ-ն ի դեմս տնօրեն Ա.Հ.Մկրտչյանի, վկայում ենք, որ Կողմերը համաձայնություն են ձեռք բերել «29» 01 2015թ. № 2-7 պայմանագրով աշխատանքի արժեքի վերաբերյալ՝ 247647100 (երկու հարյուր քառասունյոթ միլիոն վեց հարյուր քառասունյոթ հազար հարյուր) ՀՀ դրամ:

Սույն արձանագրությունը հիմք է Կողմերի միջև փոխադարձ հաշվարկների և վճարումների համար:

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա	ՀՀ ԳԱԱ Ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտ
Հասցե ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 24	**Հասցե** Հր. Ներսիսյան 25, 0014, ք. Երևան
Բանկային տվյալներ ԱՐԱՐԱՏ ԲԱՆԿ ԲԲԸ	**Բանկային տվյալներ** Զարգացման հայկական բանկ
Հ/Հ 1510005175820100	Հ/Հ 181005200723311
ՀՎՀՀ 00005673	ՀՎՀՀ 00008791
ՀՀ ԳԱԱ Նախագահ	ՀՀ ԳԱԱ ՖԿՊԻ-ի տնօրեն Ա.Հ. Մկրտչյան
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ռ.Մ. Մարտիրոսյան	
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

«29» 01 2015թ. Հավելված 4
№ 2-7 պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇԻՎ

ՊԵԿԱՏԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՍՏԱՑՎԵԼԻՔ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԿԱՏԱՐՎԵԼԻՔ ԾԱԽՍԵՐԻ

01 հունվարի 2015թ. -- 01 հունվարի 2016թ. ժամանակահատվածի համար

1. Կազմակերպության անվանումը ՀՀ ԳԱԱ Ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտ
2. Փոստային հասցեն Ք. Երևան 0014, Հր. Ներսիսյան 25
3. Չափի միավորը՝ *հազար դրամ*

		Գիտ. և գիտատեխ. գործ. ենթակառուցվածքների պահպանման և զարգացման ծրագիր ըստ եռամսյակների				Ընամենը
		I	II	III	IV	
		X	X	X	X	X
1	Աշխատավարձ և դրան հավասարեցված վճարներ	48000.00	48000.00	48000.00	48000.00	192000.00
2	Կոմունալ ծառայություններ	9675.00	3775.00	5475.00	6275.00	25200.00
	այդ թվում	X	X	X	X	
2.1	*Էլեկտրաէներգիայի դիմաց վճարումներ*	1550.00	1050.00	1050.00	1350.00	5000.00
2.2	*Գազի դիմաց վճարումներ*	6400.00	600.00	150.00	2350.00	9500.00
2.3	*Կապի ծառայությունների դիմաց վճարներ*	750.00	750.00	750.00	750.00	3000.00
2.4	*Ջրմուղ-կոյուղուց օգտվելու դիմաց վճարումներ*	300.00	300.00	300.00	300.00	1200.00
2.5	*Այլ կոմունալ ծառայությունների դիմաց վճարներ*	225.00	225.00	225.00	225.00	900.00
2.6	*Ընթացիկ նորոգման ծախսեր*	450.00	850.00	3000.00	1300.00	5600.00
3	Հարկեր, տուրքեր և այլ պարտադիր վճարներ	200.00	150.00	100.00		450.00
4	Ներքին և արտասահմանյան գործուղումներ	800.00	1500.00	1500.00	1000.00	4800.00
5	Միջազգային գիտաժողովներ ու դպրոցներ			5000.00	2500.00	7500.00
6	Էքսպերիմենտալ հետազոտություններ	750.00	1250.00	3750.00	1250.00	7000.00
7	Ոչ-նյութական հիմնական միջոցներ /համակարգչային ծրագրեր, գրքեր գրադարանում, թանգարանային ցուցանմուշներ և մշակութային արժեքներ, պատենտներ, և տեխնոլոգիական փաստաթղթեր, լիցենզիաներ, ապրանքանիշեր, հեղինակային իրավունքներ և այլն/	150.00	150.00	150.00	150.00	600.00
8	Վարչական սարքավորումներ /կահույք, համակարգչային սարքավորումներ, տպիչներ, էլեկտրոնային սարքավորումներ և այլն և դրանց հիմնանորոգում/	400.00	600.00	600.00	400.00	2000.00
9	Նյութեր	1000.00	4400.00	1650.00	1047.10	8097.10
	այդ թվում	X	X	X	X	X
9.1	*Գրասենյակային նյութեր /գրասենյակային պիտույքներ և այլ պարագաներ/*	200.00	300.00	400.00	200.00	1100.00
9.2	*Տրանսպորտային նյութեր /բենզին, դիզ. վառելիք և այլն/*	600.00	800.00	950.00	650.00	3000.00
9.3	*Ռադիոակտիվ աղբյուրներ*		3000.00			3000.00
9.4	*Այլ նյութեր*	200.00	300.00	300.00	197.10	997.10
	Ընդամենը	60975.00	59825.00	66225.00	60622.10	247647.10

ՀՀ ԳԱԱ ՖԿՊԻ ՏՆՕՐԵՆ՝ _____ /Ա.Հ.Մկրտչյան/
(ստորագրություն) (Ա.Հ.Ա.)

ԳԼԽԱՎՈՐ ՀԱՇՎԱՊԱՀ՝ _____ /Ա. Ա. Դավթյան/
(ստորագրություն) (Ա.Հ.Ա.)

«ՀՀ ԳԱԱ ՖԻԶԻԿԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՊՐՈԲԼԵՄՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ ՖԻԶԻԿԻ ПРИКЛАДНЫХ ПРОБЛЕМ ФИЗИКИ НАН РА 00008791